

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԱՄԱՍ

Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցները նոյեմբերի 29-ին «Գրքի երևանյան փառատոն» ծրագրի շրջանակներում այցելեցին Տավուշի մարզի Իջևանի N զորամաս: Զորամասի անձնակազմի ուղեկցությամբ տեղում ծանոթացան զորամասի պայմաններին և առօրյային: 2018 թվականին զորամասում կբացվի մշակութային համալիր կենտրոն, որտեղ կվերաբացվի նաև զորամասի նոր գրադարանը: Զինձառայողների շրջանում հայրենասիրության, գրքի և ընթերցանության դերը կարևորելու նպատակով զորամասի գրադարանին նվիրաբերվեց 87 միավոր գրականություն՝ Հայաստանի ազգային գրադարանի գրքափոխանակության հավաքածուից:



